# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 124

## ՍՈԹՔ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՄԻԽԱՅԵԼԻ ՊՈՂՈՍՅԱՆԻՆ 6.0 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N1477-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Սոթք գյուղի բնակիչ Կոնստանտին Միխայելի Պողոսյանի 25.08.2021թ-ի դիմումը.

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի Սոթք բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող ենթալպյան գոտու 6.0հա 3-րդ կարգի գյուղատնտեսական նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրել Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի բնակիչ Կոնստանտին Միխայելի Պողոսյանի՝ 3 տարի ժամկետով, 15750 (տասնհինգ հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ տարեկան վարձավճարով:

2.Քաղաքացու հետ կնքել վարձակալության պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ

2021թ. օգոստոսի 30

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 125

### ՍՈԹՔ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐԴԱՆ ՎԱՂԱՐՇԱԿԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻՆ 6.0 ՀԱ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԽՈՏՀԱՐՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N1477-Ն որոշման դրույթներով, հիմք ընդունելով Սոթք գյուղի բնակիչ Վարդան Վաղարշակի Հայրապետյանի 25.08.2021թ-ի դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի Սոթք բնակավայրի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող ենթալպյան գոտու 6.0 հա 3-րդ կարգի գյուղատնտեսական նշանակության խոտհարքը վարձակալությամբ տրամադրել Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի բնակիչ Վարդան Վաղարշակի Հայրապետյանին՝ 3 տարի ժամկետով, 19170 (տասինը հազար մեկ հարյուր յոթանասուն) ՀՀ դրամ տարեկան վարձավճարով:

2.Քաղաքացու հետ կնքել վարձակալության պայմանագիր:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ

2021 թ. օգոստոսի 30

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՕԳՈՍՏՈՍԻ 2021թվականի N 126

## ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 26.08.2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 119, 120, 121 ԵՎ 122 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ <<Նորմատիվ իրավական ակտերի մասին >> օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով տեխնիկական թերությունը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի ղեկավարի 26.08.2021 թվականի <<Մեծ Մասրիկ համայնքի բնակիչ Արմինե Գուրգենի Թովմասյանին 2.9 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին>> թիվ 119, <<Մեծ Մասրիկ համայնքի բնակիչ Արմինե Գուրգենի Թովմասյանին 5.48 հա գյուղատնտեսական նշանակության խոտհարքը վարձակալությամբ տրամադրելու մասին>> թիվ 120, <<Մեծ Մասրիկ համայնքի բնակիչ Արմինե Գուրգենի Թովմասյանին 0.85 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին>> թիվ 121 և <<Մեծ Մասրիկ համայնքի բնակիչ Արմինե Գուրգենի Թովմասյանին 4.08 հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրը վարձակալությամբ տրամադրելու մասին>> թիվ 122 որոշումներում <<Արմինե Գուրգենի Թովմասյան>> անուն, ազգանուն, հայրանվան փոխարեն հիմք ընդունել <<Մարինե Գուրգենի Թովմասյան>> անուն, ազգանուն, հայրանունը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ

2021 թ. օգոստոսի 30

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱՄԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Սոթք, 0269-6-17-17, geghamasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

01 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2021թվականի N 127

## ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթներով.

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1.Թույլատրել Գեղամասարի համայնքապետարանին իրականացնել Գեղամասար համայնքի Սոթք գյուղում՝ 6500մ գազաֆիկացման ցանցի կառուցման աշխատանքներ, տրամադրել շինարարության թույլտվություն:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՀԱԿՈԲ ԱՎԵՏՅԱՆ**

2021 թ. սեպտեմբերի 01